

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ. XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 374 էջ.- Հիշողության ազգագրություն. 3:*

Վերջերս լույս տեսավ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Արմենուհի Ստեփանյանի «XX



դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում» մենագրությամբ պատմական գիտությունների դոկտոր Հարություն Մարությանի: Հեղինակն աշխատությունը նվիրել է իր հոր հայրենադարձ Արմենակ Ստեփանյանի հիշատակին:

Յուրաքանչյուր հայի փափագն է ապրել Հայրենիքում: Մակայն տարբեր ժամանակներում անբարենպաստ պայմանները ստիպում են մարդկանց լքել հարազատ բնակավայրերը: Հայաստանում ապրելը երազանք է եղել նաև Մեծ եղեռնից մազապուրծ եղած և տարբեր երկրներում հանգրվանած հայերի համար, որոնք Խորհրդային Հայաստանի մասին իրենց երևակայական պատկերացումներն ունեին: Մրա վկայություններից է գրքի շապիկի նկարը՝ կատարված եգիպտահայ հայրենադարձ գրող-հրապարակախոս Գառնիկ Մվազյանի կողմից: Այն ցույց է տալիս, որ մարդկանց գիտակցության մեջ Խորհրդային Հայաստանը եղել է արևոտ, պայծառ, շեն ու բաղձալի երկիր: Իրականությունը, դժբախտաբար, չէր համապատասխանում այդ պատկերացումներին: XX դ. հայրենադարձությունը, հիմնականում, տառապանքի և երբեմն էլ ողբերգության վերածվեց: Ժամանակին նույնիսկ հնարավոր չի եղել (և սա է չարիքների աղբյուրը) բացահայտ և բազմակողմանիորեն բարձրաձայնել

և ուսումնասիրել հայրենադարձության խնդիրը՝ հատկապես ներգաղթի սխալ, անփույթ, չմտածված կազմակերպումը, որը հետագայում դարձավ արտագաղթի պատճառ:

Խորհրդային ժամանակաշրջանի ուսումնասիրություններում շեշտադրվել է հարցի պատմական նշանակությունը՝ դիտարկվելով պարզապես որպես պատմական իրողություն:

Ա. Ստեփանյանն աշխատանքում հայրենադարձության խնդիրը տարբեր տեսանկյուններից է լուսաբանում՝ սկսած սփյուռքահայերի կողմնորոշումից ներգաղթի հարցում, այնուհետև դրա կազմակերպումն ու իրագործումը, ներգաղթածների ինտեգրման խնդիրները, ներգաղթածների ու տեղաբնակների կենցաղամշակութային փոխներթափանցումները, ներգաղթածների ազգային ինքնության փոփոխություններն ու սուբթեթնիկ ինքնության ձևավորումը, քաղաքական հալածանքները, ներգաղթի ընդհատման պատճառները, արդյունքը Հայաստանում ու հետևանքները Մփյուռքում և այլ հարցեր: Այստեղ ամենակարևորն այն է, որ մենագրությունում հայրենադարձության հարցն առաջին անգամ է դիտարկվում ազգաբանական տեսանկյունից՝ որպես ազգագրական իրողություն՝ մինևույն ժողովրդի տարանջատված խմբերի համատեղման փորձ: Հեղինակը, վերլուծելով եղելությունը, մատնանշում է այդ փորձի արդյունքներն ու հետևանքները, փոխադարձ հարաբերություններն ու փոխընկալումները և այլն: Այս մոտեցմամբ էլ պայմանավորվում է աշխատության նորույթը:

Ա. Ստեփանյանի գիրքն արժեքավոր է հատկապես ջանասիրաբար գրի առած

հսկայածավալ նյութի շնորհիվ, որը հակառակ դեպքում կկորչեր և չէր լինի օբյեկտիվ այն պատկերը, որն ունենք նրա շնորհիվ: Իբրև կարևոր սկզբնաղբյուր ենք դիտում հայրենադարձ հարյուրավոր բանասացներից գրի առած ազգագրական այս նյութը, առավել ևս, որ հեղինակն այն հավաքել է երեք սերունդների ներկայացուցիչներից: Հարկ է ընդգծել նաև, որ նա օգտագործել և մեջբերել է Հայաստանի ազգային և ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվներում պահվող փաստաթղթերը, քաղաքագետների, պատմաբանների, ազգագրագետների ուսումնասիրությունները: Շրջանառության մեջ դրված արխիվային նյութերը նոր լույս են սփռում քննարկվող երևույթի պատճառների, շարժառիթների, ինչպես նաև հետևանքների վրա:

Գրախոսվող աշխատության առաջին երեք գլուխներում հետազոտվում են ներգաղթի տարբեր ժամանակահատվածները՝ 1919–20-ական թթ., 1930-ական թթ., 1946–1948 թթ., որոնցում հեղինակը ոչ միայն ներկայացնում է, թե որ երկրներից և ինչ թվաքանակով են մարդիկ Հայաստան ներգաղթել, այլև հիմնավորապես տալիս է տվյալ ժամանակաշրջանի պատմական ու քաղաքական իրավիճակը և դրա անդրադարձը հայրենադարձության խնդրին:

Ըստ էության, ազգագրական ողջ նյութը հատկապես չորրորդ և հինգերորդ գլուխներում է շարադրված՝ հայրենադարձների նոր պայմաններում հայտնվելը, հոգևոր-ազգային արժեքների տարբերությունները, աշխատանքի կարգն ու վարձատրման ձևերը, մարդկանց հոգեվիճակները և այլն: Այստեղ ենք տեսնում ներգաղթած առանձին խմբերի մշակութաբանական բնութագրերը: Այս առումով խիստ ուշագրավ է հեղինակի այն դիտողությունը, որ նշված խմբերը միմյանց ճանաչեցին ներգաղթից հետո, մինչդեռ տեղաբնակ-ներգաղթած փոխընկալումներում վերջիններս նկատվում էին որպես մեկ ամբողջություն:

Ազգաբանության տեսակետից չափազանց կարևոր են այս հանգամանքները, քանի որ հենց դրանցով է պայմանավորվում ազգի քաղաքակրթության և մշակույթի հարստությունը: Ի դեպ, ազգագրական այս

հետազոտությունում հետաքրքրական են ժողովրդի բարոյահոգեբանական խնդիրների դիտարկումները՝ նրբորեն կատարված հեղինակի կողմից:

Շատ խոսուն են հատկապես առաջին երեք գլուխների այն ենթավերնագրերը, որոնք չակերտներում դրված մեջբերումներ են և արտահայտում են շարադրանքի ենթադրվող բովանդակությունը և, ի դեպ, թեթևացնում են ակադեմիական շարադրանքի խիստ ոճը:

Անդրադարձնալով հայրենադարձների դերին, հեղինակը կարևորում է նրանց հսկայական ներդրումը Խորհրդային Հայաստանի կենսական ամենատարբեր ոլորտներում՝ սկսած կենցաղից, մինչև կրթության, գիտության և արվեստի զանազան ճյուղերը:

Գրքի եզրակացության մեջ, որ անվանվում է «Հայրենադարձության դասերը», ամփոփված են ոչ միայն հայրենադարձության արդյունքներն ու հետևանքները՝ արդարացին և անարդարացին, ճիշտն ու սխալը, այլև ներկայացվում է առաջարկների ամբողջ փաթեթ՝ ինչպես պատրաստ լինել չնախատեսված դեպքերում մեր հայրենակիցներին ընդունելու՝ խուսափելով նախկինում կատարված սխալներից: Մա անհրաժեշտ է նկատի առնել արտաքին քաղաքականության ռազմավարական ծրագրում: Բարի բուն իմաստով աշխատանքի արդիականությունը կայանում է հենց սրանում: Այս առումով գրախոսվող աշխատանքը խիստ այժմեական է:

Առանձնակի ուշադրության են արժանի գրքում զետեղված աղյուսակները, որոնք փաստացիորեն ցույց են տալիս հայրենադարձության տարեթվերը, այն երկրները, որտեղից նրանք եկել են, մարդկանց թվաքանակը և առանձնապես ներգաղթած բանասացների ցուցակը, որտեղ կարդում ենք նրանց անունները (որոնք, ի տարբերություն ներկայի հայաստանցիների, հայկական են, իսկ ազգանունների մեծ մասը յուրահատուկ են՝ բնորոշ արևմտահայերին): Տրված են նրանց ծննդյան տարեթվերը, ծագման վայրը և վերաբնակության տեղը՝ նախքան Խորհրդային Հայաստան տեղափոխվելը: Գրքում զետեղված են լուսանկարներ, որոնք ընկալվում են իբրև ֆոտոփաստաթուղթ և ոչ որ-

պես այբումի լուսանկար: Գրքի վերջում առանձին ցուցակով տրվում են համառոտագրությունները, աղբյուրների և գրականության ցանկերը, որոնք հեշտացնում են դրանցից օգտվելու հնարավորությունը:

Գրքի կուռ, հմտորեն շարադրված նյութը երբեմն ընդհատվում է շատ դիպուկ մեջբերվող սրամիտ գվարձախոսություններով, որոնց հիմքում, թեև, կրկին ոչ այնքան ուրախ հանգամանքներ են ընկած: Հետաքրքրական ու տպավորիչ դիտարկումներից է նաև ռուսախոս հայերի կողմից օգտագործվող «ախպարկա» բառը: Մի բառ, որ ցույց է տալիս սրբազան «եղբայր» բառի անցած աղճատման ուղին:

Գրքում տեղ չի գտել և ոչ մի պատահականություն, այլ ճիշտ հակառակը՝ սկսած շապիկից մինչև շարադրանքի վերջը՝ Խրիմյան Հայրիկի խոսքերը. «Ո տայր ինձ, որ ավետիս տայի ձեզ Նոյան աղավնին, թե ցամ-

քեցավ ջրհեղեղ, դարձեք Ձեր Հայրենի աշխարհ» (էջ 321):

Ի մի բերելով ասվածը, պետք է նշել, որ Ա. Ստեփանյանի սույն աշխատությունը լուրջ ներդրում է XX դ. Խորհրդային Հայաստանի պատմության և ազգաբանության ուսումնասիրման մեջ: Գրքի ծավալը թույլ չի տվել առանձին խոսել Հայրենիքում ներգաղթողների ստեղծած մեծ արժեքների մասին, սակայն արժե, իհարկե, մի առանձին աշխատություն նվիրել հայրենադարձների թողած այն բացառիկ ժառանգությանը, որի շնորհիվ հարստացել է մեր արվեստը, գիտությունը, գրականությունը, շինարարությունը, լուսավորությունը և այլն:

Մնում է ավելացնել, որ աշխատությունն ունի անգլերեն լեզվով բավականին ընդարձակ ամփոփում՝ մի հանգամանք, որ կնպաստի հայերեն չիմացողներին ծանոթանալ բովանդակությանը:

ԱՍՏԴԻԿ ԻՍԴԱՅԵԼՅԱՆ